«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 32/02

ք.Երևան, Արշակունյաց 5,417 սենյակ

11.09.2018թ. ժամը 15:00

«ՍԳԿԿ» ԻԿԿ դիտորդ խորհրդի նախագահ Ա.Չիտչյանի 29.08.2018թ-ի թիվ 863 գրության հետագա ընթացքը ապահովելու նպատակով, սնանկության գործով կառավարիչ Մայիս Հայրապետյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու և գրությունում նշված փաստական հանգամանքների քննության համար՝ ս/թ-ի սեպտեմբերի 11-ին ժամը 15.00-ին՝ հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Սնանկության գործով կառավարիչ Մայիս Հայրապետյանը

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝Հարություն Գևորգյանը
Հանձանաժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Սնանկության գործով կառավարիչ՝ Մայիս Հայրապետյանը

Մինչև նիստի բացվելը սնանկության գործով կառավարիչ Մայիս Հայրապետյանը հայտարարեց, որ ինքը պահանջում է որ նիստին ներկա գտնվի «ՍԳԿԿ» ԻԿԿ Դիտորդ Խորհրդի նախագահ՝Արսեն Չիտչյանը,քանի որ ինքը հարցեր ունի նրան ուղղելու և եթե նա այս նիստին չի մասնակցի ինքը գտնում է,որ իր մասնակցությունը նույնպես անիմաստ է: Կառավարիչը նշեց նաև որ իրեն ուղարկված գրության հետ կցված ցանկը անհիմն փաստաթուղթ է,քանի որ այն ստորագրված և կնքված չէ, որը իրականությանը չի արտացոլում իր գործողությունների կատարման վերաբերյալ:

Կարգապահական հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը հրավիրեց կառավարչին նստելու և առաջարկեց քննարկումների միջոցով պարզաբանումներ տալ բոլոր հարցերին,այդ ընթացքում զանգահարելուվ Դիտորդ Խորհրդի նախագահ՝Արսեն Չիտչյանին,որը հեռախոսով տեղեկանալով հանձնաժողովի նիստին մասնակցելու կառավարչի պահանջի և հանձնաժողովի նախագահի՝ հրավերի մասին,պատասխանեց որ Կարգապահական հանձնաժողովի նիստին մասնակցելու կարիք չի տեսնում անկողմնակալ կարծիքների ապահովվման նպատակով:Սնանկության գործով կառավարիչ Մայիս Հայրապետյանը լսելով պատասխանը,որ Դիտորդ Խորհրդի նախագահ՝Արսեն Չիտչյանը չի մասնակցելու նիստին,հեռացավ նիստի անցկացման սենյակից,չնայած հանձնաժողովի անդամների հորդորներին քննարկումների կազմակերպման անհրաժեշտության:

ԼՍԵՑԻՆ – Կարգապահական հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը բացեց նիստը հակիրճ ներկայացրեց «ՍԳԿԿ» ԻԿԿ հանձնաժողովի գրության բովանդակությունը:

Կարգապահական հանձնաժողովի անդամ Արմենակ Ադամյանը ձայնի իրավունք վերցնելով, առաջարկեց նիստը հետաձգել մեկ այլ հերթի, քանի որ սնանկության գործով կառավարիչը բանավոր հայտարարություն ներկայացրեց և որևէ փաստաթղթեր չներկայացրեց որպես

հիմնավորում: Սահմանել մեկշաբաթյան ժամկետ՝ սնանկության գործով կառավարիչ Մայիս Հայրապետյանին ներկայացնելու անհրաժեշտ փաստաթղթերը:
Հանձնաժողովի անդամ Ռուբեն Խալաթյանը առաջարկեց հարցում կատարել «ՍԳԿԿ» ԻԿԿ աշխատակազմին ներկայացնելու ներկայացված տեղեկատվության վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն,որը կլինի ստուգված և վերջնական ճշտված:
Հանձնաժողովի անդամները քննարկեցին առաջարկները և համաձայնելով քվեարկեցին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կողմ - 5
Դեմ – 0
Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ՝
1.«ՍԳԿԿ» ԻԿԿ դիտորդ խորհրդի նախագահ Ա.Չիտչյանի 29.08.2018թ-ի թիվ 863 գրության հետագա ընթացքը ապահովելու նպատակով, սնանկության գործով կառավարիչ Մայիս Հայրապետյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու և գրությունում նշված փաստական հանգամանքների քննության համար 2018թ-ի սեպտեմբեր 11-ին ժամը 15.00-ին՝ հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստը հետաձգել և նշանակել 11.10.2018թ-ին ժամը 17.00-ին, ք.Երևան, Արշակունյաց 5. 417 սենյակ, հասցեում:
2.Հանձնաժողովի քարտուղարին ապահովվել կողմերին պատշաճ ծանուցում, հանձնաժողովի նիստի վայրի և ժամի մասին և կատարել որոշված հարցումները:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Ադամյան

Հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Գևորգյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Մարտիկյան